Խորհրդի 84/450/ԵՏՀ հրահանգը, Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 97/7/ԵՀ, 98/27/ԵՀ եւ 2002/65/ԵՀ հրահանգներն ու Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի թիվ 2006/2004 (ԵՀ) կանոնակարգը փոփոխող՝

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՊԱՌԼԱՄԵՆՏԻ ԵՎ ԽՈՐՀՐԴԻ

2005 թվականի մայիսի 11-ի 2005/29/ԵՀ ՀՐԱՀԱՆԳ

Ներքին շուկայում սպառողների նկատմամբ տնտեսավարող սուբյեկտների անբարեխիղճ առեւտրային գործելակերպի մասին

(«Անբարեխիղճ առեւտրային գործելակերպի մասին» հրահանգ)

(Եվրոպական տնտեսական տարածքին առնչվող տեքստ)

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՊԱՌԼԱՄԵՆՏԸ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ,

հաշվի առնելով «Եվրոպական համայնքի հիմնադրման մասին» պայմանագիրը եւ մասնավորապես դրա 95-րդ հոդվածը,

հաշվի առնելով Հանձնաժողովից ստացված առաջարկը,

հաշվի առնելով Տնտեսական եւ սոցիալական հարցերով եվրոպական կոմիտեի եզրակացությունը ([1]),

գործելով Պայմանագրի 251-րդ հոդվածով սահմանված ընթացակարգի համաձայն ([2]),

---

[1] ՊՏ C 108, 30.04.2004թ., էջ 81:

[2] Եվրոպական պառլամենտի 2004 թվականի ապրիլի 20-ի եզրակացություն (ՊՏ C 104 E, 30.04.2004թ., էջ 260), Խորհրդի 2004 թվականի նոյեմբերի 15-ի ընդհանուր դիրքորոշում (ՊՏ C 38 E, 15.02.2005թ., էջ 1), Եվրոպական պառլամենտի 2005 թվականի փետրվարի 24-ի դիրքորոշում (Պաշտոնական տեղեկագրում դեռ չհրապարակված) եւ Խորհրդի 2005 թվականի ապրիլի 12-ի որոշում:

քանի որ՝

1) Պայմանագրի 153(1) եւ (3)(ա) հոդվածով նախատեսվում է, որ Համայնքը Պայմանագրի 95-րդ հոդվածի համաձայն իր կողմից ընդունվող միջոցներով պետք է նպաստի սպառողների պաշտպանության բարձր մակարդակի ձեռքբերմանը,

2) Պայմանագրի 14(2) հոդվածին համապատասխան՝ ներքին շուկան սահմաններ չունեցող տարածք է, որտեղ ապահովվում է ապրանքների եւ ծառայությունների ազատ տեղաշարժը եւ հիմնադրման ազատությունը: Ներքին սահմաններ չունեցող տարածքում բարեխիղճ առեւտրային գործելակերպ զարգացնելը շատ կարեւոր է միջսահմանային գործունեության զարգացումը խթանելու համար,

3) անդամ պետությունների՝ անբարեխիղճ առեւտրային գործելակերպերի վերաբերյալ օրենքներն արձանագրում են զգալի տարբերություններ, որոնք կարող են առաջացնել մրցակցության զգալի խաթարումներ եւ ներքին շուկայի անխափան գործունեությունը վտանգող խոչընդոտներ: Գովազդի բնագավառում «Մոլորեցնող եւ համեմատական գովազդի մասին» Խորհրդի 1984 թվականի սեպտեմբերի 10-ի 84/450/ԵՏՀ հրահանգը ([1]) սահմանում է մոլորեցնող գովազդի վերաբերյալ օրենսդրության ներդաշնակեցման նվազագույն չափորոշիչները, սակայն չի արգելում անդամ պետություններին պահպանել կամ ձեռնարկել միջոցներ, որոնք սպառողների առավել ընդարձակ պաշտպանություն են ապահովում: Արդյունքում անդամ պետությունների՝ մոլորեցնող գովազդի վերաբերյալ դրույթներն էապես տարբերվում են,

4) այս հակասություններն անորոշություն են ստեղծում՝ կապված այն հարցի հետ, թե սպառողների տնտեսական շահերը վնասող անբարեխիղճ առեւտրային գործելակերպերի նկատմամբ որ ազգային կանոններն են

[1] ՊՏ L 250, 19.09.1984թ., էջ 17: Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 97/55/ԵՀ հրահանգով փոփոխված Հրահանգ (ՊՏ L 290, 23.10.1997թ., էջ 18):

կիրառվում, եւ ստեղծում են բազմաթիվ խոչընդոտներ, որոնք ազդում են տնտեսավարող սուբյեկտների եւ սպառողների վրա: Այս խոչընդոտները մեծացնում են ներքին շուկայում ազատություններ կիրառելու գործողությունների ծախսը, մասնավորապես, երբ տնտեսավարող սուբյեկտները ցանկանում են զբաղվել միջսահմանային առեւտրով, գովազդային արշավներով եւ վաճառքի խթանմանն ուղղված միջոցառումներով: Այդպիսի խոչընդոտները նաեւ անորոշության մեջ են գցում սպառողներին՝ կապված իրենց իրավունքների հետ եւ խարխլում են ներքին շուկայում նրանց վստահությունը,

5) Համայնքի մակարդակով միասնական կանոնների բացակայության պարագայում սահմաններից դուրս ապրանքների եւ ծառայությունների ազատ տեղաշարժվելուն կամ հիմնադրման ազատությանը սպառնացող խոչընդոտները կարող են վերացվել Եվրոպական համայնքների Արդարադատության դատարանի նախադեպային իրավունքի համաձայն այնքան ժամանակ, քանի դեռ դրանք ձգտում են պաշտպանել հանրային շահ ներկայացնող հայտնի նպատակները եւ համարժեք են այդ նպատակներին: Հաշվի առնելով Համայնքի՝ Պայմանագրի դրույթներում եւ ազատ տեղաշարժի վերաբերյալ Համայնքի երկրորդային իրավունքում նշված նպատակները եւ համաձայն Առեւտրային հաղորդագրությունների վերաբերյալ Հանձնաժողովի քաղաքականության, ինչպես նշված է Հանձնաժողովից ստացված «Ներքին շուկայում առեւտրային հաղորդագրությունների վերաբերյալ Կանաչ փաստաթղթին հաջորդող փաստաթուղթ» անվանումը կրող հաղորդագրության մեջ, այդ խոչընդոտները պետք է վերացվեն: Այս խոչընդոտները կարող են վերացվել միայն Համայնքի մակարդակով միասնական կանոններ ստեղծելով, որոնք սպառողների պաշտպանության բարձր մակարդակ են ապահովում, եւ Համայնքի մակարդակով որոշ իրավական հասկացություններ պարզաբանելով՝ այնքանով, որքանով դա անհրաժեշտ է ներքին շուկայի

պատշաճ գործունեությունն ապահովելու եւ իրավական որոշակիության պահանջները բավարարելու համար,

6) սույն հրահանգով հետեւաբար համապատասխանեցվում են անբարեխիղճ առեւտրային գործելակերպերի վերաբերյալ անդամ պետությունների օրենքները, ներառյալ՝ անբարեխիղճ գովազդը, որն անմիջականորեն վնասում է սպառողների տնտեսական շահերը՝ դրանով իսկ վնասելով օրինական մրցակիցների տնտեսական շահերը: Համաչափության սկզբունքին համահունչ՝ սույն հրահանգը սպառողներին պաշտպանում է այդպիսի անբարեխիղճ առեւտրային գործելակերպերի հետեւանքներից, եթե դրանք նյութական են, սակայն չբացառելով, որ այդ ազդեցությունը կարող է աննշան լինել: Այն չի առնչվում միայն մրցակիցների տնտեսական շահերը վնասող կամ առեւտրային գործունեություն իրականացնողների միջեւ գործարքների հետ կապված անբարեխիղճ առեւտրային գործելակերպերի վերաբերյալ ազգային օրենսդրությանը եւ չի ազդում դրա վրա. ամբողջապես հաշվի առնելով լրացուցչության սկզբունքը՝ անդամ պետությունները պետք է կարողանան այդ գործելակերպերը կարգավորել Համայնքի իրավունքին համապատասխան, եթե նրանք որոշում են այդպես անել: Սույն հրահանգը չի առնչվում տնտեսավարող սուբյեկտների համար մոլորեցնող, սակայն սպառողների համար չմոլորեցնող գովազդի եւ համեմատական գովազդի մասին 84/450/ԵՏՀ հրահանգի դրույթներին եւ չի ազդում դրանց վրա: Ավելին, սույն հրահանգը չի ազդում գովազդի ու շուկայահանման ընդունված այնպիսի գործելակերպերի վրա, ինչպիսիք են օրինական քողարկված գովազդը, ապրանքանիշի տարբերակումը կամ խրախուսանքի միջոցներ առաջարկելը, որը կարող է օրինական ճանապարհով ազդել ապրանքատեսակների վերաբերյալ սպառողների ունեցած պատկերացումների վրա եւ ազդեցություն ունենալ նրանց վարքագծի վրա՝ չվնասելով սպառողի՝ հիմնավորված որոշում կայացնելու ունակությունը,

7) սույն հրահանգն անդրադառնում է անմիջապես սպառողների՝ արտադրատեսակներ ձեռք բերելու որոշումների վրա ազդելու հետ կապված առեւտրային գործելակերպերին: Դրանում անդրադարձ չի կատարվում առաջին հերթին այլ նպատակների համար իրականացվող առեւտրային գործելակերպերին՝ ներառյալ, օրինակ, ներդրողներին ուղղված առեւտրային հաղորդագրությունները, ինչպես օրինակ՝ տարեկան հաշվետվություններն ու կորպորատիվ գովազդային գրականությունը: Այն չի անդրադառնում պատշաճության սահմանների վերաբերյալ իրավական պահանջներին, որոնք անդամ պետությունների միջեւ մեծապես տարբերվում են: Այնպիսի առեւտրային գործելակերպը, ինչպիսին է օրինակ՝ փողոցային գովազդը, կարող է անդամ պետություններում մշակութային նկատառումներով անցանկալի լինել: Համապատասխանաբար անդամ պետությունները պետք է կարողանան պատշաճության սահմանների պահպանման նկատառումներով շարունակել արգելել առեւտրային գործելակերպերն իրենց տարածքում՝ Համայնքի իրավունքին համապատասխան, նույնիսկ եթե այդ գործելակերպերը չեն սահմանափակում սպառողների ընտրության ազատությունը: Սույն հրահանգը կիրառելիս պետք է ամբողջապես հաշվի առնել նշված առանձին դեպքի համատեքստը, մասնավորապես՝ դրան առնչվող ընդհանուր կետերը,

8) սույն հրահանգն անմիջականորեն պաշտպանում է սպառողների տնտեսական շահերը սպառողների նկատմամբ տնտեսավարող սուբյեկտների անբարեխիղճ առեւտրային գործելակերպից: Այսպիսով, այն նաեւ անուղղակիորեն պաշտպանում է օրինական գործունեություն ծավալող տնտեսավարող սուբյեկտներին իրենց այն մրցակիցներից, որոնք չեն գործում սույն հրահանգի կանոններով, եւ այդպիսով բարեխիղճ մրցակցություն է երաշխավորում դրանով համակարգվող ոլորտներում: Հասկանալի է, որ գոյություն ունեն առեւտրային այլ գործելակերպեր, որոնք, թեեւ չեն վնասում սպառողներին, սակայն կարող են վնասել մրցակիցներին

եւ գործնական հաճախորդներին: Հանձնաժողովը պետք է մանրակրկիտ ուսումնասիրի սույն հրահանգի գործողության շրջանակից դուրս՝ անբարեխիղճ մրցակցության ոլորտում Համայնքի գործողության անհրաժեշտությունը եւ անհրաժեշտության դեպքում օրենսդրական առաջարկ ներկայացնի անբարեխիղճ մրցակցության այլ ոլորտներ ընդգրկելու վերաբերյալ,

9) սույն հրահանգը չի սահմանափակում անբարեխիղճ առեւտրային գործելակերպից տուժած անձանց կողմից ներկայացվող անհատական հայցերը: Այն նաեւ չի հակասում պայմանագրային իրավունքի, մտավոր սեփականության իրավունքների, արտադրատեսակների մասով առողջության եւ անվտանգության հայեցակետերի, ստեղծման եւ թույլտվության ռեժիմների պայմանների վերաբերյալ Համայնքի եւ ազգային կանոններին, ներառյալ՝ այն կանոնները, որոնք, Համայնքի իրավունքին համապատասխան, վերաբերում են մոլախաղերին, ինչպես նաեւ Համայնքի մրցակցային կանոններին ու դրանց կիրարկումն ապահովող ազգային դրույթներին: Անդամ պետությունները պետք է, ելնելով իրենց տարածքում սպառողների առողջության եւ անվտանգության պաշտպանության նկատառումներից, այդպիսով կարողանան պահպանել կամ ներկայացնել, օրինակ, ալկոհոլի, ծխախոտի կամ դեղագործական արտադրանքների հետ կապված առեւտրային գործելակերպերի սահմանափակումներ ու արգելքներ՝ անկախ առեւտրային գործունեություն իրականացնողի հիմնադրման վայրից: Ֆինանսական ծառայություններն ու անշարժ գույքը, իրենց բարդության եւ դրանց հատուկ լուրջ ռիսկերի պատճառով, մանրամասն պահանջներ սահմանելու անհրաժեշտություն են առաջացնում՝ ներառյալ առեւտրային գործունեություն իրականացնողների վրա դրված դրական պարտավորությունները: Այդ պատճառով սույն հրահանգը չի սահմանափակում ֆինանսական ծառայությունների ու անշարժ գույքի ոլորտում անդամ պետությունների՝ սպառողների տնտեսական շահերը

պաշտպանելու համար դրա դրույթներով կարգավորվող շրջանակից ավելին նախատեսելու իրավունքը: Նպատակահարմար չէ, որ դրանով կարգավորվեն թանկարժեք մետաղներից պատրաստված պարագաների հարգի չափանիշի հավաստումն ու նշումը,

10) անհրաժեշտ է ապահովել, որ սույն հրահանգի եւ Համայնքի գործող իրավունքի միջեւ հարաբերությունները լինեն համաձայնեցված, մասնավորապես, երբ անբարեխիղճ առեւտրային գործելակերպի վերաբերյալ մանրամասն դրույթները կիրառվում են որոշ հայեցակետերի նկատմամբ: Այսպիսով, սույն հրահանգը փոփոխում է 84/450/ԵՏՀ հրահանգը, «Հեռահար պայմանագրերի առումով սպառողների պաշտպանության մասին» Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 1997 թվականի մայիսի 20–ի 97/7/ԵՀ հրահանգը ([1]), «Սպառողների շահերի պաշտպանության նպատակով իրավունքը խախտող կամ դրա խախտման համար վտանգ ստեղծող գործողությունները (անգործությունը) կանխող միջոցների մասին» Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 1998 թվականի մայիսի 19-ի 98/27/ԵՀ հրահանգը ([2]) եւ «Սպառողական ֆինանսական ծառայությունների հեռակա շուկայահանման մասին» Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 2002 թվականի սեպտեմբերի 23-ի 2002/65/ԵՀ հրահանգը ([3]): Համապատասխանաբար սույն հրահանգը կիրառվում է այնքան ժամանակ, քանի դեռ չկան անբարեխիղճ առեւտրային գործելակերպերը կարգավորող Համայնքի իրավունքի կոնկրետ դրույթներ, ինչպես օրինակ՝ տեղեկատվության առնչվող պահանջներն ու կանոններն են այն մասին, թե ինչպես պետք է տեղեկությունները ներկայացվեն սպառողին: Համայնքի մակարդակով կոնկրետ ոլորտային օրենսդրության բացակայության դեպքում այն ապահովում է սպառողների պաշտպանությունը եւ արգելում է առեւտրային գործունեություն

[1] ՊՏ L 144, 04.06.1997թ., էջ 19: 2002/65/ԵՀ հրահանգով (ՊՏ L 271, 09.10.2002թ., էջ 16) փոփոխված հրահանգ:
[2] ՊՏ L 166, 11.06.1998թ., էջ 51: 2002/65/ԵՀ հրահանգով վերջին անգամ փոփոխված հրահանգ:
[3] ՊՏ L 271, 09.10.2002թ., էջ 16:

իրականացնողներին արտադրանքի բնույթի վերաբերյալ կեղծ տպավորություն ստեղծելը: Սա հատկապես կարեւոր է սպառողների համար բարձր ռիսկայնություն ունեցող բարդ արտադրանքների դեպքում, ինչպես օրինակ՝ ֆինանսական ծառայությունների կոնկրետ արտադրանքները: Սույն հրահանգը համապատասխանաբար լրացնում է Համայնքի օրենսդրությունը *(Community acquis)*, որը կիրառելի է սպառողների տնտեսական շահերը վնասող առեւտրային գործելակերպերի նկատմամբ,

11) սույն հրահանգի միջոցով ազգային դրույթների մոտարկման ճանապարհով ձեռք բերված համապատասխանության բարձր մակարդակը ստեղծում է սպառողների պաշտպանության ընդհանուր բարձր մակարդակ: Սույն հրահանգը սպառողների տնտեսական վարքագիծն աղավաղող անբարեխիղճ առեւտրային գործելակերպերի ընդհանուր միասնական արգելք է սահմանում: Այն նաեւ սահմանում է առեւտրային ագրեսիվ բնույթի գործելակերպերի վերաբերյալ կանոններ, որոնք ներկայումս չեն կարգավորվում Համայնքի մակարդակով,

12) ներդաշնակեցումը զգալիորեն կմեծացնի թե՛ սպառողների, թե՛տնտեսավարող սուբյեկտների իրավական որոշակիությունը: Եվ՛ սպառողները, եւ՛ տնտեսավարող սուբյեկտները կկարողանան ապավինել ԵՄ մասշտաբով անբարեխիղճ առեւտրային գործելակերպերի բոլոր հայեցակետերը կարգավորող հստակ սահմանված իրավական հասկացությունների վրա հիմնված կարգավորող միասնական շրջանակին: Արդյունքում կվերացվեն սպառողների տնտեսական շահերը վնասող անբարեխիղճ առեւտրային գործելակերպերի վերաբերյալ կանոնների մասնատումից բխող խոչընդոտները, եւ հնարավոր կդառնա ներքին շուկայի կայացումն այդ ոլորտում,

13) ներքին շուկայի խոչընդոտները վերացնելու միջոցով Համայնքի նպատակներին հասնելու համար անհրաժեշտ է փոխարինել անդամ պետությունների՝ գործող, ընդհանուր տարամետ կետերն ու իրավական

սկզբունքները: Հետեւաբար սույն հրահանգով սահմանված միասնական, ընդհանուր արգելքը վերաբերում է սպառողների տնտեսական վարքագիծն աղավաղող անբարեխիղճ առեւտրային գործելակերպերին: Սպառողների վստահությունը պահպանելու համար ընդհանուր արգելքը պետք է հավասարապես կիրառվի անբարեխիղճ առեւտրային այն գործելակերպերի նկատմամբ, որոնք տեղի են ունենում առեւտրային գործունեություն իրականացնողի եւ սպառողի միջեւ ցանկացած պայմանագրային հարաբերությունների շրջանակից դուրս կամ պայմանագիրը կնքելուց հետո եւ դրա կատարման ընթացքում: Ընդհանուր արգելքը մշակվում է առեւտրային գործելակերպերի այն երկու տեսակների վերաբերյալ կանոնների միջոցով, որոնք մինչեւ այժմ ամենատարածվածն են, մասնավորապես խոսքը վերաբերում է մոլորեցնող առեւտրային գործելակերպերին եւ առեւտրային ագրեսիվ բնույթի գործելակերպերին,

14) ցանկալի է, որ մոլորեցնող առեւտրային գործելակերպերն ընդգրկեն այն գործելակերպերը, ներառյալ՝ մոլորեցնող գովազդը, որոնք սպառողին ապակողմնորոշելու միջոցով թույլ չեն տալիս, որ վերջինս հիմնավորված եւ արդյունավետ որոշում ընդունի: Մոլորեցնող գովազդի վերաբերյալ անդամ պետությունների օրենքներին եւ գործելակերպերին համապատասխան՝ սույն հրահանգը մոլորեցնող գործելակերպերը դասակարգում է հետեւյալ կերպ՝ մոլորեցնող գործողություններ եւ մոլորեցնող անգործություն: Անգործության հետ կապված՝ սույն հրահանգը սահմանում է տեղեկությունների սահմանափակ թվով հիմնական կետեր, որոնք սպառողին անհրաժեշտ են ձեռքբերման հիմնավորված որոշում կայացնելու համար: Այս տեղեկությունները չպետք է բացահայտվեն բոլոր գովազդներում, այլ միայն այն ժամանակ, երբ առեւտրային գործունեություն իրականացնողը գնման հրավեր է կատարում, որը սույն հրահանգով հստակ սահմանված հասկացություն է: Սույն հրահանգով ընդունված ամբողջական ներդաշնակեցման մոտեցումը չի խոչընդոտում, որ անդամ պետությունն

ազգային իրավունքում հստակեցնի որոշակի արտադրանքների, ինչպես օրինակ՝ հավաքածուի նմուշի կամ էլեկտրական ապրանքների հիմնական այնպիսի առանձնահատկություններ, որոնք չհստակեցնելը էական անգործության դրսեւորում կլինի գնման հրավեր կատարելիս: Սույն հրահանգը նպատակ չունի նվազեցնելու սպառողի ընտրության հնարավորությունը՝ արգելելով այլ արտադրատեսակների նմանություն ունեցող արտադրատեսակների խթանումը, քանի դեռ այս նմանությունը սպառողին շփոթության մեջ չի գցում՝ կապված արտադրանքի կոմերցիոն ծագման հետ, եւ հետեւաբար չի մոլորեցնում: Սույն հրահանգը չի հակասում Համայնքի գործող օրենքին, որն անդամ պետություններին ուղղակիորեն հնարավորություն է ընձեռում ընտրություն կատարելու առեւտրային գործելակերպերի ոլորտում սպառողների պաշտպանությունը կարգավորող մի քանի տարբերակների միջեւ: Մասնավորապես սույն հրահանգը չի հակասում «Էլեկտրոնային հաղորդակցության ոլորտում անձնական տվյալների մշակման եւ անձեռնմխելիության պաշտպանության մասին» ([1]) Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 2002 թվականի հուլիսի 12-ի 2002/58/ԵՀ հրահանգի 13(3) հոդվածին,

15) եթե Համայնքի իրավունքով սահմանվում են առեւտրային հաղորդագրությունների, գովազդի եւ շուկայահանման հետ կապված տեղեկություններին ներկայացվող պահանջներ, ապա այդ տեղեկությունները համարվում են էական՝ համաձայն սույն հրահանգի: Անդամ պետությունները պետք է կարողանան պահպանել կամ ավելացնել պայմանագրային իրավունքի հետ կապված կամ պայմանագրային իրավունքի մասով հետեւանքներ ունեցող տեղեկություններին ներկայացվող պահանջներ, եթե դա թույլ են տալիս Համայնքի գործող իրավունքի վերաբերյալ փաստաթղթերի նվազագույն պայմանները: Սահմանադրության *(acquis) մեջ* այդ տեղեկություններին ներկայացվող պահանջների ոչ սպառիչ

[1] ՊՏ L 201, 31.07.2002թ., էջ 37:

ցանկը ներկայացված է II հավելվածում: Հաշվի առնելով սույն հրահանգով ներկայացված ամբողջական ներդաշնակեցումը՝ միայն Համայնքի իրավունքով պահանջվող տեղեկություններն են համարվում էական՝ դրա 7(5) հոդվածի նպատակով: Եթե անդամ պետությունները նվազագույն պայմանների հիման վրա ներկայացրել են տեղեկատվությանը ներկայացվող՝ Համայնքի իրավունքում ընդգրկվածներից բարձր պահանջներ, ապա այդ հավելյալ տեղեկատվությունը չնշելը չի համարվի մոլորեցնող անգործություն՝ համաձայն սույն հրահանգի: Ի տարբերություն վերոնշյալի, անդամ պետությունները պետք է կարողանան Համայնքի իրավունքի նվազագույն պայմաններով թույլատրելի լինելու դեպքում պահպանել կամ ներկայացնել Համայնքի իրավունքին համապատասխան ավելի խիստ դրույթներ՝ ապահովելու համար սպառողների անհատական պայմանագրային իրավունքների՝ ավելի բարձր մակարդակի պաշտպանություն,

16) առեւտրային ագրեսիվ բնույթի գործելակերպերի վերաբերյալ դրույթները պետք է ընդգրկեն այն գործելակերպերը, որոնք զգալիորեն թուլացնում են սպառողի՝ ազատ ընտրություն կատարելու իրավունքը: Դրանք այն գործելակերպերն են, որոնք ոտնձգության, հարկադրանքի տարրեր են պարունակում, ներառյալ՝ ֆիզիկական ուժի գործադրումն ու անհարկի ազդեցությունը,

17) ցանկալի է, որ առեւտրային այդ գործելակերպերը, որոնք բոլոր հանգամանքներում անբարեխիղճ են, նույնականացվեն՝ իրավական ավելի մեծ որոշակիություն ապահովելու համար: Այսպիսով, I հավելվածում ընդգրկված է այս բոլոր գործելակերպերի սպառիչ ցանկը: Սրանք այն միակ առեւտրային գործելակերպերն են, որոնք կարող են անբարեխիղճ համարվել՝ առանց 5-ից 9-րդ հոդվածների դրույթների՝ ըստ առանձին դեպքերի գնահատման: Այս ցանկը կարող է փոփոխվել միայն Հրահանգի վերանայման դեպքում,

18) անհրաժեշտ է բոլոր սպառողներին պաշտպանել անբարեխիղճ առեւտրային գործելակերպերից. այնուամենայնիվ, Արդարադատության դատարանն անհրաժեշտ է համարել, որ 84/450/ԵՏՀ հրահանգն ուժի մեջ մտնելուց հետո գովազդի վերաբերյալ գործերի առնչությամբ որոշում կայացնելու համար ուսումնասիրվի ազգային, տիպիկ սպառողի վրա դրանց ազդեցությունը: Համաչափության սկզբունքին համահունչ եւ այդ հրահանգով նախատեսված պաշտպանական միջոցների արդյունավետ կիրարկումը թույլ տալու նպատակով սույն հրահանգով որպես հենանիշ է ընդունվում միջին վիճակագրական սպառողը, որն Արդարադատության դատարանի մեկնաբանությամբ ընդհանուր առմամբ լավ տեղեկացված է եւ բավականաչափ ուշադիր ու շրջահայաց՝ հաշվի առնելով սոցիալական, մշակութային եւ լեզվական գործոնները. սույն հրահանգը պարունակում է նաեւ դրույթներ՝ ուղղված այն սպառողներին շահագործելու դեպքերը կանխելուն, որոնց առանձնահատկությունները նրանց հատկապես խոցելի են դարձնում անբարեխիղճ առեւտրային գործելակերպերի նկատմամբ: Եթե առեւտրային գործելակերպը կոնկրետ ուղղված է սպառողների որոշակի խմբին, օրինակ՝ երեխաներին, ապա ցանկալի է, որ առեւտրային գործելակերպը գնահատվի այդ խմբի միջին վիճակագրական անդամի վրա դրա ազդեցության տեսանկյունից: Հետեւաբար նպատակահարմար է բոլոր հանգամանքներում անբարեխիղճ համարվող գործելակերպերի ցանկում ընդգրկել մի դրույթ, որը, երեխաներին ուղղված գովազդի նկատմամբ բացարձակ արգելք չկիրառելով, պաշտպանում է նրանց գնում կատարելու ուղղակի կոչերից: Միջին վիճակագրական սպառողի մասով իրականացված հետազոտությունը վիճակագրական հետազոտություն չէ: Ազգային դատարանները եւ մարմինները, կոնկրետ դեպքի նկատմամբ միջին վիճակագրական սպառողի սովորական արձագանքը որոշելու համար, պետք է գործի դնեն դատողություն անելու իրենց սեփական կարողությունը՝ հաշվի առնելով Արդարադատության դատարանի նախադեպային իրավունքը,

19) եթե որոշ հատկանիշներ, ինչպիսիք են տարիքը, ֆիզիկական կամ մտավոր թուլությունը կամ դյուրահավատությունը, սպառողներին առավել խոցելի են դարձնում առեւտրային գործելակերպի կամ տվյալ արտադրանքի նկատմամբ, եւ հնարավոր է, որ այդ գործելակերպի միջոցով միայն այդ սպառողների տնտեսական վարքագիծն աղավաղվի այնպես, որ առեւտրային գործունեություն ծավալողը կարողանա դա կանխատեսել, ապա անհրաժեշտ է ապահովել, որ նրանք լինեն պատշաճ կերպով պաշտպանված՝ գործելակերպը խմբի միջին վիճակագրական անդամի վրա ազդեցության տեսանկյունից գնահատելու միջոցով,

20) անհրաժեշտ է սահմանել վարքագծի կանոնագրքերի դերը, որն առեւտրային գործունեություն իրականացնողներին հնարավորություն կտա կոնկրետ տնտեսական ոլորտներում արդյունավետորեն կիրառելու սույն հրահանգի սկզբունքները: Այն բնագավառներում, որտեղ կան առեւտրային գործունեություն իրականացնողների վարքագիծը կարգավորող կոնկրետ պարտադիր պահանջներ, նպատակահարմար է, որ դրանք նաեւ ապացույց հանդիսանան այդ բնագավառում մասնագիտական բարեխղճությանը ներկայացվող պահանջների մասով: Անբարեխիղճ առեւտրային գործելակերպերը վերացնելու նպատակով Կանոնագրքի հեղինակների կողմից ազգային եւ Համայնքի մակարդակով իրականացվող հսկողությունը կարող է վերացնել վարչական կամ դատական կարգով բողոքարկելու անհրաժեշտությունը, եւ հետեւաբար այն պետք է խրախուսվի: Սպառողների՝ բարձր մակարդակի պաշտպանություն ապահովելու համար սպառողների կազմակերպությունները կարող են տեղեկացվել եւ ներգրավվել վարքագծի կանոնագրքեր կազմելու գործերում,

21) ազգային իրավունքի համաձայն՝ այս հարցում օրինական շահ ունեցող անձինք կամ կազմակերպությունները պետք է իրավական պաշտպանության միջոցներ ունենան անբարեխիղճ առեւտրային գործելակերպերի դեմ վարույթ նախաձեռնելու համար դատարանում կամ վարչական մարմնի մոտ,

որոնք իրավասու են բողոքների լուծման մասին որոշումներ ընդունելու կամ համապատասխան իրավական վարույթ իրականացնելու համար: Քանի որ ապացուցման պարտականությունը սահմանելն ազգային իրավունքի խնդիրն է, նպատակահարմար է դատարաններին եւ վարչական մարմիններին հնարավորություն տալ առեւտրային գործունեություն իրականացնողներից պահանջելու ներկայացնել ապացույցներ իրենց կողմից արված փաստացի բողոքների ճշգրտության մասով,

22) անհրաժեշտ է, որ անդամ պետությունները պատժամիջոցներ սահմանեն սույն հրահանգի դրույթները խախտելու համար եւ ապահովեն այդ պատժամիջոցների կիրարկումը: Նշված պատժամիջոցները պետք է լինեն արդյունավետ, համաչափ եւ տարհամոզիչ,

23) քանի որ սույն հրահանգի նպատակները՝ սպառողների տնտեսական շահերը վնասող անբարեխիղճ առեւտրային գործելակերպերի վերաբերյալ անդամ պետությունների օրենքները, կանոնակարգերը եւ վարչական ակտերը մոտարկելու միջոցով անբարեխիղճ առեւտրային գործելակերպերի վերաբերյալ ազգային օրենսդրությամբ սահմանված ներքին շուկայի բնականոն գործունեությանը սպառնացող խոչընդոտները վերացնելը եւ սպառողների՝ ընդհանուր բարձր մակարդակի պաշտպանություն ապահովելը չեն կարող բավարար չափով իրագործվել անդամ պետությունների կողմից, եւ հետեւաբար ավելի արդյունավետորեն կարող են իրագործվել Համայնքի մակարդակով, ապա Համայնքը կարող է միջոցներ ընդունել՝ Պայմանագրի 5-րդ հոդվածով սահմանված լրացուցչության սկզբունքին համապատասխան: Այդ հոդվածով սահմանված համաչափության սկզբունքի համաձայն՝ սույն հրահանգը չի նախատեսում ավելին, քան անհրաժեշտ է ներքին շուկային սպառնացող խոչընդոտները վերացնելու եւ սպառողների՝ ընդհանուր բարձր մակարդակի պաշտպանություն ապահովելու համար,

24) նպատակահարմար է վերանայել սույն հրահանգը՝ ապահովելու ներքին շուկային սպառնացող խոչընդոտների վերացումը եւ սպառողների՝ բարձր մակարդակի պաշտպանության իրականացումը: Վերանայման արդյունքում Հանձնաժողովը կարող է սույն հրահանգը փոփոխելու վերաբերյալ առաջարկ ներկայացնել, որը կարող է ներառել 3(5) հոդվածում նշված շեղումի սահմանափակ երկարաձգում եւ (կամ) Հանձնաժողովի՝ Սպառողների քաղաքականության ռազմավարությունն ապահովող պարտավորություններն արտացոլող՝ սպառողների պաշտպանության այլ օրենսդրության փոփոխություններ՝ գործող օրենսդրությունը *(acquis)* վերանայելու համար, որպեսզի հնարավոր լինի հասնել սպառողների՝ բարձր, ընդհանուր մակարդակի պաշտպանության,

25) սույն հրահանգը պահպանում է հիմնարար իրավունքները եւ հետեւում է մասնավորապես Եվրոպական միության հիմնարար իրավունքների մասին խարտիայով ճանաչված սկզբունքներին,

ԸՆԴՈՒՆԵՑԻՆ ՍՈՒՅՆ ՀՐԱՀԱՆԳԸ.

ԳԼՈՒԽ 1

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 1

Նպատակը

Սույն հրահանգի նպատակն է անդամ պետությունների՝ սպառողների տնտեսական շահերը վնասող անբարեխիղճ առեւտրային գործելակերպերի

վերաբերյալ օրենքները, կանոնակարգերը եւ վարչական ակտերը մոտարկելու միջոցով նպաստել ներքին շուկայի պատշաճ գործունեությանը եւ ապահովել սպառողների՝ բարձր մակարդակով պաշտպանություն:

Հոդված 2

Սահմանումները

Սույն հրահանգի նպատակներով՝

ա) «սպառող» նշանակում է ցանկացած ֆիզիկական անձ, որը սույն հրահանգով կարգավորվող առեւտրային գործելակերպի շրջանակներում իրականացնում է իր առեւտրային, ձեռնարկատիրական գործունեությամբ, արհեստով կամ մասնագիտությամբ չհետապնդվող նպատակներ,

բ) «առեւտրային գործունեություն իրականացնող» նշանակում է ցանկացած ֆիզիկական կամ իրավաբանական անձ, որը սույն հրահանգով կարգավորվող առեւտրային գործելակերպի շրջանակներում իրականացնում է իր առեւտրային, ձեռնարկատիրական գործունեությամբ, արհեստով կամ մասնագիտությամբ հետապնդվող նպատակներ, եւ ցանկացած անձ, որը գործում է առեւտրային գործունեություն իրականացնողի անունից կամ նրա կողմից,

գ) «արտադրանք» նշանակում է ցանկացած ապրանք կամ ծառայություն, ներառյալ՝ անշարժ գույքը, իրավունքներն ու պարտավորությունները,

դ) «սպառողների նկատմամբ տնտեսավարող սուբյեկտների առեւտրային գործելակերպ» (այսուհետ նաեւ՝ առեւտրային գործելակերպ) նշանակում է առեւտրային գործունեություն իրականացնողի կողմից իրականացվող ցանկացած գործողություն, անգործություն, վարքագծի կամ ներկայացման ընթացք, առեւտրային հաղորդագրություն, ներառյալ՝ գովազդումն ու շուկայահանումը, որն անմիջականորեն կապված է արտադրանքը սպառողին գովազդելու, վաճառելու կամ մատակարարելու հետ,

ե) «էապես աղավաղել սպառողների տնտեսական վարքագիծը» նշանակում է առեւտրային գործելակերպի կիրառմամբ զգալիորեն թուլացնել սպառողի՝ հիմնավորված որոշում կայացնելու ունակությունը՝ դրանով իսկ դրդելով սպառողին կայացնելու ձեռքբերման այնպիսի որոշում, որը նա այլ պարագայում չէր կայացնի,

զ) «վարքագծի կանոնագիրք» նշանակում է անդամ պետության օրենքով, կանոնակարգով կամ վարչական դրույթով չսահմանվող համաձայնագիր կամ կանոնների փաթեթ, որը սահմանում է այն առեւտրային գործունեություն իրականացնողների վարքագիծը, որոնք առեւտրային մեկ կամ ավելի կոնկրետ գործելակերպերի կամ ձեռնարկատիրական բնագավառների մասով ստանձնում են այդ կանոնագրքով սահմանված պարտավորությունները,

է) «կանոնագրքի հեղինակ» նշանակում է ցանկացած անձ, ներառյալ՝ առեւտրային գործունեություն իրականացնողը կամ առեւտրային գործունեություն իրականացնողների խումբը, որը պատասխանատու է վարքագծի կանոնագրքի կազմման եւ վերանայման եւ (կամ) այդ կանոնագրքի պահանջների կատարումն այն անձանց կողմից դիտանցելու համար, որոնք ստանձնել են դրանով սահմանված պարտավորությունները,

ը) «մասնագիտական բարեխղճություն» նշանակում է հատուկ հմտությունների եւ հոգատար վերաբերմունքի ընդունված չափանիշ, որը տրամաբանորեն ակնկալվում է, որ առեւտրային գործունեություն իրականացնողը կկիրառի սպառողների նկատմամբ՝ շուկայի բարեխիղճ գործելակերպին եւ (կամ) առեւտրային գործունեություն իրականացնողի գործունեության ոլորտում արժանահավատության գլխավոր սկզբունքին համապատասխան,

թ) «գնման հրավեր» նշանակում է առեւտրային հաղորդագրություն, որը կիրառվող առեւտրային հաղորդագրության միջոցներին համապատասխան եղանակով մատնանշում է տվյալ արտադրանքի առանձնահատկություններն ու գինը եւ դրանով իսկ սպառողին գնում կատարելու հնարավորություն է ընձեռում,

ժ) «անհարկի ազդեցություն» նշանակում է սպառողի նկատմամբ ունեցած լիազորության չարաշահում, ինչպիսին է ճնշում գործադրելը, նույնիսկ եթե դա կատարվում է առանց ֆիզիկական ուժ գործադրելու կամ գործադրելու սպառնալիք կիրառելու, այնպիսի եղանակով, որն զգալիորեն սահմանափակում է սպառողի՝ հիմնավորված որոշում կայացնելու ունակությունը,

ժա) «ձեռքբերման որոշում» նշանակում է սպառողի կողմից կայացված ցանկացած որոշում, որը վերաբերում է այնպիսի հարցերի, ինչպիսիք են ինչպես կամ ինչ պայմաններում գնում կատարելը, վճարումը կատարել ամբողջությամբ, թե մասնակիորեն, պահպանել, թե տնօրինել արտադրանքը, արդյոք տվյալ արտադրանքի նկատմամբ պայմանագրով նախատեսված իրավունքներ կիրառել՝ անկախ այն հանգամանքից՝ սպառողը կորոշի գործել, թե զերծ կմնա գործելուց,

ժբ) «կանոնակարգվող մասնագիտություն» նշանակում է մասնագիտական գործունեություն կամ մասնագիտական գործունեությունների խումբ, որի հասանելիությունը կամ որով զբաղվելը կամ այդ գործունեությանը հետամուտ լինելու եղանակներից մեկը պայմանական է՝ ուղիղ թե անուղղակի ձեւով՝ կախված մասնագիտական հատուկ որակավորումների տիրապետումից՝ համաձայն օրենքների, կանոնակարգերի կամ վարչական դրույթների:

Հոդված 3

Գործողության ոլորտը

1. Սույն հրահանգը կիրառվում է սպառողների նկատմամբ տնտեսավարող սուբյեկտների անբարեխիղճ առեւտրային գործելակերպի նկատմամբ, ինչպես սահմանված է 5-րդ հոդվածում, արտադրանքի հետ կապված առեւտրային գործարքից առաջ, դրա ընթացքում եւ դրանից հետո:

2. Սույն հրահանգը չի հակասում պայմանագրային իրավունքին եւ մասնավորապես պայմանագրի գործողության ժամկետի, կազմման կամ ուժի մեջ լինելու կանոններին:

3. Սույն հրահանգը չի հակասում արտադրանքների մասով առողջության եւ անվտանգության հայեցակետերի վերաբերյալ Համայնքի կամ ազգային կանոններին:

4. Սույն հրահանգի եւ անբարեխիղճ առեւտրային գործելակերպի որոշակի հայեցակետերի վերաբերյալ Համայնքի այլ կանոնների դրույթների միջեւ հակասությունների դեպքում վերջիններս գերակայում են եւ կիրառվում նշված որոշակի հայեցակետերի նկատմամբ:

5. 2007 թվականի հունիսի 12-ից սկսած վեց տարի ժամանակահատվածով անդամ պետությունները պետք է կարողանան սույն հրահանգով մոտարկված ոլորտում շարունակել ազգային դրույթների կիրառումը, որոնք ավելի սահմանափակող կամ կարգադրողական են, քան սույն հրահանգը, եւ որոնք կիրարկում են ներդաշնակեցման նվազագույն կետեր պարունակող հրահանգներ: Այս միջոցները պետք է կարեւոր լինեն անբարեխիղճ առեւտրային գործելակերպից սպառողների պատշաճ ձեւով պաշտպանությունն ապահովելու համար եւ պետք է լինեն համաչափ այս նպատակի իրականացմանը: 18-րդ հոդվածում նշված վերանայումը կարող է անհրաժեշտության դեպքում այս շեղումը հետագա սահմանափակ ժամկետով երկարաձգելու առաջարկ պարունակել:

6. Անդամ պետություններն անհապաղ Հանձնաժողովին տեղեկացնում են 5-րդ պարբերության հիման վրա կիրառված ցանկացած ազգային դրույթի մասին:

7. Սույն հրահանգը չի հակասում դատարանների իրավասությունը սահմանող կանոններին:

8. Սույն հրահանգը չի հակասում ստեղծման կամ թույլտվության ռեժիմների որեւէ պայմանների կամ վարքագծի դեոնտոլոգիական կանոնագրքերի կամ

կանոնակարգվող մասնագիտությունները կարգավորող որոշակի այլ կանոնների, որպեսզի կարողանա ապահովել մասնագետի բարոյական բարձր չափանիշները, որոնք անդամ պետությունները կարող են, Համայնքի իրավունքին համապատասխան, վերապահել մասնագետներին:

9. Անդամ պետությունները 2002/65/ԵՀ հրահանգով սահմանված «ֆինանսական ծառայությունների» եւ անշարժ գույքի մասով կարող են սահմանել այնպիսի պահանջներ, որոնք ավելի սահմանափակող կամ կարգադրողական են, քան սույն հրահանգի պահանջներն են սույն հրահանգով մոտարկվող ոլորտում:

10. Սույն հրահանգը չի վերաբերում անդամ պետությունների՝ թանկարժեք մետաղներից պատրաստված պարագաների հարգի չափանիշի հավաստման եւ նշման վերաբերյալ օրենքներին, կանոնակարգերին եւ վարչական դրույթներին:

Հոդված 4

Ներքին շուկան

Անդամ պետությունները սույն հրահանգով մոտարկվող ոլորտին առնչվող հանգամանքներով պայմանավորված չպետք է սահմանափակեն ո՛չ ծառայություններ մատուցելու ազատությունը, ո՛չ էլ ապրանքների ազատ տեղաշարժը:

ԳԼՈՒԽ 2

ԱՆԲԱՐԵԽԻՂՃ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԳՈՐԾԵԼԱԿԵՐՊ

Հոդված 5

Անբարեխիղճ առեւտրային գործելակերպի արգելումը

1. Անբարեխիղճ առեւտրային գործելակերպն արգելվում է:

2. Առեւտրային գործելակերպն անբարեխիղճ է, եթե՝

   ա) այն հակասում է մասնագիտական բարեխղճության պահանջներին,

   եւ

   բ) այն էապես աղավաղում է կամ կարող է էապես աղավաղել միջին վիճակագրական սպառողի՝ արտադրանքի նկատմամբ դրսեւորած տնտեսական վարքագիծը, որին այդ արտադրանքը հասնում կամ հասցեագրվում է, կամ խմբի միջին վիճակագրական անդամի վարքագիծը, երբ առեւտրային գործելակերպն ուղղված է սպառողների կոնկրետ խմբի:

3. Առեւտրային գործելակերպերը, որոնք կարող են էապես աղավաղել միայն այն սպառողների հստակ որոշելի խմբի տնտեսական վարքագիծը, որոնք իրենց մտավոր կամ ֆիզիկական թուլության, տարիքի կամ դյուրահավատության պատճառով հատկապես խոցելի են տվյալ գործելակերպի կամ տվյալ արտադրանքի նկատմամբ, եւ դա կատարել այնպես, որ առեւտրային գործունեություն իրականացնողը կարող էր կանխատեսել այդ, պետք է գնահատվեն խմբի միջին վիճակագրական անդամի տեսանկյունից: Սա չի հակասում չափազանցված հայտարարություններ կամ ոչ բառացի հասկանալու համար նախատեսված

հայտարարություններ անելու ընդհանուր եւ օրինական գովազդման գործելակերպին:

4. Մասնավորապես անբարեխիղճ են համարվում առեւտրային այն գործելակերպերը, որոնք՝

ա) մոլորեցնող են, ինչպես նշված է 6-րդ եւ 7-րդ հոդվածներում, կամ

բ) ագրեսիվ են, ինչպես նշված է 8-րդ եւ 9-րդ հոդվածներում:

5. Ի հավելվածը ներառում է առեւտրային այն գործելակերպերի ցանկը, որոնք բոլոր հանգամանքներում համարվում են անբարեխիղճ: Այդ նույն միակ ցանկը կիրառվում է բոլոր անդամ պետություններում եւ կարող է ձեւափոխվել միայն սույն հրահանգի վերանայմամբ:

Բաժին 1

Մոլորեցնող առեւտրային գործելակերպ

Հոդված 6

Մոլորեցնող գործողությունները

1. Առեւտրային գործելակերպը համարվում է մոլորեցնող, եթե այն պարունակում է կեղծ տեղեկություններ եւ այդպիսով արժանահավատ չէ կամ ինչ որ ձեւով, ներառյալ՝ ընդհանուր ներկայացման եղանակը, մոլորեցնում է կամ կարող է մոլորեցնել միջին վիճակագրական սպառողին, նույնիսկ եթե տեղեկությունը փաստացիորեն ճիշտ է՝ կապված հետեւյալ տարրերից մեկի կամ մի քանիսի հետ, եւ երկու դեպքում էլ դրդում է կամ կարող է դրդել, որ նա կայացնի ձեռքբերման այնպիսի որոշում, որը վերջինս այլ պարագայում չէր կայացնի՝

ա) արտադրանքի գոյություն կամ բնույթ,

բ) արտադրանքի հիմնական հատկանիշներ, ինչպիսիք են օրինակ՝ առկայությունը, առավելությունները, ռիսկերը, գործարկումը, կառուցվածքը, աքսեսուարները, վաճառքից հետո սպառողին ցուցաբերվող աջակցությունն ու բողոքների ուսումնասիրումը, արտադրության կամ մատակարարման մեթոդը եւ ամսաթիվը, առաքումը, նպատակահարմարությունը, օգտագործումը, քանակությունը, մասնագրերը, աշխարհագրական կամ կոմերցիոն ծագումը կամ դրա օգտագործումից ակնկալվող արդյունքները, կամ այդ արտադրանքի մասով իրականացվող փորձարկումների կամ ստուգումների արդյունքներն ու կարեւոր հատկանիշները,

գ) առեւտրային գործունեություն իրականացնողի ստանձնած պարտավորությունների ծավալը, առեւտրային գործելակերպի եւ վաճառքի գործընթացի բնույթի դրդապատճառները, առեւտրային գործունեություն իրականացնողի կամ արտադրանքի հովանավորության կամ հավանության հետ ուղիղ կամ անուղղակի ձեւով կապ ունեցող որեւէ նշում կամ խորհրդանիշ,

դ) գինը կամ գնի հաշվարկման եղանակը եւ կամ հստակ գնի առավելության առկայությունը,

ե) ծառայության մատուցման, պահեստամասի փոխարինման կամ վերանորոգման կարիքը,

զ) առեւտրային գործունեություն իրականացնողի կամ նրա ներկայացուցչի բնույթը, հատկանիշներն ու իրավունքները, ինչպես օրինակ՝ նրա ինքնությունը եւ ակտիվները, արդյունաբերական, առեւտրային կամ մտավոր սեփականության իրավունքների մասով որակավորումները, կարգավիճակը, հավանությունը, պատկանելությունը կամ կապը եւ սեփականությունը կամ նրա պարգեւներն ու առանձնահատկությունները,

է) սպառողի իրավունքները, ներառյալ՝ «Սպառողական ապրանքների վաճառքի որոշ ասպեկտների եւ դրանց համար տրված երաշխիքների մասին» Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 1999 թվականի մայիսի 25-ի 1999/44/ԵՀ հրահանգով ([1]) նախատեսված փոխարինման կամ փոխհատուցման իրավունքը կամ այն ռիսկերը, որոնց նա կարող է հանդիպել:

2. Առեւտրային գործելակերպը համարվում է մոլորեցնող նաեւ այն ժամանակ, երբ փաստացիորեն, հաշվի առնելով դրա բոլոր առանձնահատկություններն ու հանգամանքները, այն դրդրում է կամ կարող է դրդել միջին վիճակագրական սպառողին կայացնելու ձեռքբերման այնպիսի որոշում, որը վերջինս այլ պարագայում չէր կայացնի, եւ պարունակում է՝

ա) արտադրանքի շուկայահանման որեւէ եղանակ, ներառյալ՝ համեմատական գովազդը, որը շփոթմունք է ստեղծում՝ կապված մրցակցի ցանկացած արտադրանքի, ապրանքային նշանի, ապրանքատեսակի անվանման կամ մյուս տարբերակիչ նշանների հետ,

բ) առեւտրային գործունեություն իրականացնողի կողմից վարքագծի կանոնագրքում պարունակվող՝ իր կողմից ստանձնած պարտավորությունների չկատարում, եթե՝

i) պարտավորությունը մոտիվացնող չէ, սակայն ֆիքսված է եւ ստուգման ենթակա,

եւ

ii) առեւտրային գործունեություն իրականացնողն առեւտրային գործելակերպում նշում է, որ ինքը պարտավորվում է կատարել կանոնագրքով սահմանված պարտավորությունները:

[1] ՊՏ L 171, 07.07.1999թ., էջ 12:

Հոդված 7

Մոլորեցնող անգործությունը

1. Առեւտրային գործելակերպը համարվում է մոլորեցնող, եթե փաստացիորեն, հաշվի առնելով դրա բոլոր առանձնահատկություններն ու հանգամանքները, ինչպես նաեւ հաղորդակցության միջոցների սահմանափակումները, այն չի նշում կարեւոր այն տեղեկությունները, որոնք անհրաժեշտ են միջին վիճակագրական սպառողին, ըստ համատեքստի, ձեռքբերման հիմնավորված որոշում կայացնելու համար, եւ դրանով իսկ դրդում է կամ կարող է դրդել միջին վիճակագրական սպառողին կայացնելու ձեռքբերման այնպիսի որոշում, որը վերջինս այլ պարագայում չէր կայացնի:

2. Մոլորեցնող անգործություն է համարվում նաեւ այն դեպքը, երբ հաշվի առնելով 1-ին պարբերության մեջ նկարագրված հարցերը՝ առեւտրային գործունեություն իրականացնողը թաքցնում է կամ ոչ պարզ, ոչ հստակ, անորոշ ձեւով կամ ոչ ճիշտ ժամանակին է տրամադրում այնպիսի կարեւոր տեղեկություններ, ինչպիսիք նշված են այդ պարբերության մեջ, կամ չի բացահայտում առեւտրային գործելակերպի առեւտրային մտադրությունը, եթե դա արդեն իսկ պարզ չի համատեքստից, եւ եթե երկու դեպքում էլ այն դրդում է կամ կարող է դրդել միջին վիճակագրական սպառողին կայացնելու ձեռքբերման այնպիսի որոշում, որը վերջինս այլ պարագայում չէր կայացնի:

3. Եթե առեւտրային գործելակերպի մասին տեղեկություններ հաղորդելու համար նախատեսված միջոցը տեղի եւ ժամանակի առումով սահմանափակումներ ունի, ապա այդ սահմանափակումները եւ առեւտրային գործունեություն իրականացնողի կողմից տրամադրվող տեղեկությունները սպառողի համար մատչելի դարձնելու համար ձեռնարկած ցանկացած միջոց պետք է հաշվի առնվի՝ որոշելու համար՝ արդյոք անգործություն է ցուցաբերվել տեղեկությունները նշելու հարցում:

4. Գնման հրավերի դեպքում հետեւյալ տեղեկությունները համարվում են կարեւոր, եթե արդեն իսկ հասկանալի չեն համատեքստից՝

ա) արտադրանքի հիմնական առանձնահատկություններն այնքանով, որքանով դրանք նպատակահարմար են ներկայացման միջոցի եւ արտադրանքի առումով,

բ) առեւտրային գործունեություն իրականացնողի աշխարհագրական հասցեն եւ ինքնությունը, ինչպես օրինակ՝ նրա առեւտրային անվանումը եւ անհրաժեշտության դեպքում այն առեւտրային գործունեություն իրականացնողի աշխարհագրական հասցեն եւ ինքնությունը, որի անունից նա գործունեություն է ծավալում,

գ) հարկերը ներառող գինը, կամ եթե արտադրանքի բնույթը ենթադրում է, որ դրա գինը հնարավոր չէ նախապես հաշվարկել, ապա դրա հաշվարկման եղանակը, ինչպես նաեւ անհրաժեշտության դեպքում բոլոր հավելյալ բեռնափոխադրումների, առաքումների կամ փոստային վճարները, կամ եթե հնարավոր չէ այդ վճարները նախապես հաշվարկել, ապա այն փաստը, որ այդ հավելյալ վճարները ենթակա են մուծման,

դ) վճարման, առաքման, ներկայացման կարգն ու բողոքների ուսումնասիրման քաղաքականությունը, եթե դրանք տարբերվում են մասնագիտական բարեխղճությանը ներկայացվող պահանջներից,

ե) դադարեցման կամ չեղարկման իրավունք վերապահող արտադրանքների եւ գործարքների համար այդպիսի իրավունքի գոյությունը:

5. Համայնքի իրավունքով սահմանված՝ տեղեկատվությանը ներկայացվող այն պահանջները, որոնք վերաբերում են առեւտրային հաղորդակցությանը, ներառյալ՝ գովազդին կամ շուկայահանմանը, եւ որոնց ոչ սպառիչ ցանկն ընդգրկված է II հավելվածում, համարվում են կարեւոր:

Բաժին 2

Ագրեսիվ առեւտրային գործելակերպ

Հոդված 8

Ագրեսիվ առեւտրային գործելակերպը

Առեւտրային գործելակերպը համարվում է ագրեսիվ, եթե փաստացիորեն, հաշվի առնելով դրա բոլոր առանձնահատկություններն ու հանգամանքները, ոտնձգության, հարկադրանքի, այդ թվում՝ ֆիզիկական ուժի գործադրման, կամ անհարկի ազդեցության միջոցով զգալիորեն թուլացնում է կամ կարող է թուլացնել միջին վիճակագրական սպառողի՝ ազատ ընտրություն կատարելու իրավունքը կամ արտադրանքի նկատմամբ վարքագիծը եւ դրանով իսկ դրդում է կամ կարող է դրդել միջին վիճակագրական սպառողին կայացնելու ձեռքբերման այնպիսի որոշում, որը վերջինս այլ պարագայում չէր կայացնի:

Հոդված 9

Ոտնձգության, հարկադրանքի եւ անհարկի ազդեցության գործադրումը

Որոշելու համար՝ արդյոք առեւտրային գործելակերպում գործադրվել են ոտնձգություն, հարկադրանք, այդ թվում՝ ֆիզիկական ուժ կամ անհարկի ազդեցություն, հաշվի է առնվում հետեւյալը.

ա) դրա իրականացման ժամանակը, վայրը, բնույթը կամ շարունակականությունը,

բ) սպառնալից կամ վիրավորական բառապաշարի օգտագործումը կամ վարքագծի դրսեւորումը,

գ) առեւտրային գործունեություն իրականացնողի կողմից՝ սպառողի որոշում կայացնելու վրա ազդող ցանկացած այնպիսի կոնկրետ անհաջողության կամ այնքան լուրջ հանգամանքի չարաշահումը, որի մասին առեւտրային գործունեություն իրականացնողը տեղյակ է, եւ որը կատարվում է արտադրանքի հետ կապված սպառողի որոշման վրա ազդելու նպատակով,

դ) առեւտրային գործունեություն իրականացնողի կողմից այն դեպքերի մասով սահմանվող ցանկացած ծանր կամ անհամաչափ արտապայմանագրային խոչընդոտներ, երբ սպառողը ցանկանում է իրականացնել պայմանագրով նախատեսված, ներառյալ՝ պայմանագիրը դադարեցնելու կամ մեկ այլ արտադրանք ձեռք բերելու կամ առեւտրային գործունեություն իրականացնող մեկ այլ անձից գնում կատարելու իր իրավունքները,

ե) անօրինական որեւէ գործողություն ձեռնարկելու ցանկացած սպառնալիք:

ԳԼՈՒԽ 3

ՎԱՐՔԱԳԾԻ ԿԱՆՈՆԱԳՐՔԵՐ

Հոդված 10

Վարքագծի կանոնագրքերը

Սույն հրահանգով չի բացառվում անդամ պետությունների կողմից խրախուսվող՝ անբարեխիղճ առեւտրային գործելակերպերի նկատմամբ կանոնագրքի

հեղինակների կողմից իրականացվող վերահսկողությունը եւ 11-րդ հոդվածում նշված անձանց կամ կազմակերպությունների կողմից այդ մարմիններին դիմելը, եթե այդ մարմիններում վարույթ սկսելն իրականացվում է ի լրումն այդ հոդվածում նշված դատական կամ վարչական վարույթների:

Վերահսկողության այդ մարմիններին դիմելը չի դիտվում որպես դատական կամ վարչական մարմիններին դիմելու՝ 11-րդ հոդվածով նախատեսված միջոցներից հրաժարվելուն համարժեք գործողություն:

ԳԼՈՒԽ 4

ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 11

Կիրարկումը

1. Անդամ պետություններն ապահովում են անբարեխիղճ առեւտրային գործելակերպերի դեմ պայքարի պատշաճ եւ արդյունավետ միջոցների առկայությունը՝ կատարելու համար սույն հրահանգի դրույթները՝ ելնելով սպառողների շահերից:

   Այդ միջոցները ներառում են իրավական դրույթներ, ըստ որոնց՝ այն անձինք կամ կազմակերպությունները, որոնք ազգային իրավունքի համաձայն անբարեխիղճ առեւտրային գործելակերպերի դեմ պայքարելու հարցում օրինական շահ ունեն, այդ թվում՝ նաեւ մրցակիցները, կարող են՝

   ա) նախաձեռնել իրավական վարույթի հարուցումն այդպիսի անբարեխիղճ առեւտրային գործելակերպերի առնչությամբ, եւ (կամ)

բ) այդպիսի անբարեխիղճ առեւտրային գործելակերպերի առնչությամբ բողոք ներկայացնել վարչական մարմին, որն իրավասու է բողոքների մասով որոշումներ ընդունել կամ համապատասխան իրավական վարույթ հարուցել:

Յուրաքանչյուր անդամ պետություն ինքն է որոշում, թե նշված միջոցներից որը պետք է հասանելի լինի, եւ արդյոք պետք է թույլատրել, որ դատարանները կամ վարչական մարմինները բողոքները քննելու համար սահմանված այլ, այդ թվում՝ 10-րդ հոդվածում նշված միջոցներին նախապես դիմելու պահանջ ներկայացնեն: Այդ միջոցները պետք է հասանելի լինեն՝ անկախ նրանից՝ ազդեցության ենթարկված սպառողները գտնվում են այն անդամ պետության տարածքում, որտեղ առեւտրային գործունեություն իրականացնողն է գտնվում, թե մեկ այլ անդամ պետության տարածքում:

Յուրաքանչյուր անդամ պետություն ինքն է որոշում՝

ա) արդյոք այդ իրավական միջոցները կարող են ուղղվել միեւնույն տնտեսական բնագավառի մի շարք առեւտրային գործունեություն իրականացնողների դեմ՝ առանձին-առանձին կամ համատեղ կերպով,

եւ

բ) արդյոք այդ իրավական միջոցները կարող են ուղղվել կանոնագրքի հեղինակի դեմ, եթե համապատասխան կանոնագիրքը նպաստում է իրավական պահանջների չկատարմանը:

2. 1-ին պարբերությամբ նախատեսված իրավական դրույթների համաձայն՝ անդամ պետությունները դատարաններին կամ վարչական մարմիններին օժտում են այնպիսի լիազորություններով, որոնցով այդպիսի միջոցառումների ձեռնարկումը վերջիններիս կողմից անհրաժեշտ համարվելու դեպքերում, հաշվի առնելով համապատասխան բոլոր շահերը եւ մասնավորապես հանրային շահը, նրանք հնարավորություն կունենան՝

ա) պահանջելու դադարեցնել անբարեխիղճ առեւտրային գործելակերպը կամ անբարեխիղճ առեւտրային գործելակերպը դադարեցնելու հրաման տալու համար համապատասխան վարույթ սկսելու,

կամ

բ) եթե անբարեխիղճ առեւտրային գործելակերպը դեռ չի իրականացվել, սակայն այն անխուսափելի է, ապա պահանջելու արգելել գործելակերպը կամ գործելակերպը դադարեցնելու հրաման տալու համար համապատասխան վարույթ սկսելու,

նույնիսկ առանց փաստացի կորստի կամ վնասի եւ կամ առեւտրային գործունեություն իրականացնողի մտադրության կամ անզգուշության վերաբերյալ ապացույցների առկայության:

Անդամ պետությունները պետք է դրույթ նախատեսեն նաեւ առաջին ենթապարբերությամբ սահմանված միջոցներն արագացված ընթացակարգով ձեռնարկելու համար, որպեսզի ստանան՝

- միջանկյալ արդյունք, կամ
- վերջնական արդյունք՝

ելնելով այն համոզմունքից, որ յուրաքանչյուր անդամ պետություն ինքը պետք է որոշի այդ երկու տարբերակներից որն ընտրել:

Բացի այդ, անդամ պետությունները կարող են դատարաններին կամ վարչական մարմիններին անբարեխիղճ առեւտրային այն գործելակերպերի շարունակական ազդեցությունները վերացնելու նպատակով, որոնց դադարեցումը կարգադրվել է վերջնական որոշմամբ, օժտել այնպիսի լիազորություններով, որոնցով նրանք հնարավորություն կունենան՝

ա) պահանջելու այդ որոշման ամբողջական կամ մասնակի հրապարակումն այն ձեւաչափով, որը նրանք նպատակահարմար կհամարեն.

բ) ներկայացնելու ուղղում կատարելու մասին հայտարարություն հրապարակելու հավելյալ պահանջ:

3. Առաջին պարբերության մեջ նշված վարչական մարմինները պետք է՝

ա) ունենան այնպիսի կազմ, որն իրենց անկողմնակալության մասով կասկածների տեղիք չտա,

բ) բողոքների լուծման մասին որոշումներ ընդունելու դեպքում ունենան համապատասխան լիազորություններ՝ իրենց որոշումների կատարումն արդյունավետ կերպով դիտանցելու համար,

գ) կարողանան հիմնավորել իրենց որոշումները:

2-րդ պարբերությամբ նախատեսված լիազորությունները բացառապես վարչական մարմնի կողմից իրականացվելու դեպքում պետք է միշտ ներկայացվեն վերջինիս կողմից ընդունած որոշումների հիմնավորումները: Ավելին, այս դեպքում անհրաժեշտ է դրույթ սահմանել այն ընթացակարգերի մասով, համաձայն որի վարչական մարմնի կողմից իր լիազորությունների ոչ պատշաճ կամ չհիմնավորված իրականացումը կամ նշված լիազորությունների ոչ պատշաճ կամ չհիմնավորված չիրականացումը կարող է ենթակա լինել դատական վերանայման:

Հոդված 12

Դատարանները եւ վարչական մարմինները. բողոքների հիմնավորումը

Անդամ պետությունները դատարաններին կամ վարչական մարմիններին օժտում են այնպիսի լիազորություններով, որոնք նրանց հնարավորություն են տալիս 11-րդ հոդվածում նշված քաղաքացիական կամ վարչական վարույթներով՝

ա) պահանջելու առեւտրային գործունեություն իրականացնողից ներկայացնել ապացույցներ առեւտրային գործելակերպի հետ կապված փաստացի բողոքների ճշգրտության մասով, եթե հաշվի առնելով առեւտրային գործունեություն իրականացնողի կամ վարույթի մեկ այլ՝ ցանկացած կողմի օրինական շահը՝ այդ պահանջը տեղին է՝ կոնկրետ դեպքի հանգամանքներից ելնելով,

եւ

բ) փաստացի բողոքները համարելու ոչ ճշգրիտ, եթե «ա» կետի համաձայն պահանջվող ապացույցները չեն ներկայացվում կամ դատարանի կամ վարչական մարմնի կողմից համարվում են ոչ բավարար:

Հոդված 13

Պատժամիջոցները

Անդամ պետությունները սույն հրահանգի կիրարկման նպատակով ընդունված ազգային դրույթների խախտման դեպքերի համար սահմանում են պատժամիջոցներ եւ ձեռնարկում են դրանց կիրարկման ապահովման համար անհրաժեշտ բոլոր միջոցները: Այդ պատժամիջոցները պետք է լինեն արդյունավետ, համաչափ եւ տարհամոզիչ:

Հոդված 14

84/450/ԵՏՀ հրահանգում կատարվող փոփոխությունները

Սույնով 84/450/ԵՏՀ հրահանգում կատարվում են հետեւյալ փոփոխությունները.

1. 1-ին հոդվածը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«Հոդված 1.

Սույն հրահանգի նպատակն է պաշտպանել առեւտրային գործունեություն իրականացնողներին մոլորեցնող գովազդից եւ դրա անբարեխիղճ հետեւանքներից, ինչպես նաեւ սահմանել պայմաններ, որոնցով թույլատրվում է համեմատական գովազդը:»:

2. 2-րդ հոդվածում՝

- 3-րդ կետը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«3. «առեւտրային գործունեություն իրականացնող» նշանակում է ցանկացած ֆիզիկական կամ իրավաբանական անձ, որն իրականացնում է իր առեւտրային, ձեռնարկատիրական գործունեությամբ, արհեստով կամ մասնագիտությամբ հետապնդվող նպատակներ, եւ ցանկացած անձ, որը գործում է առեւտրային գործունեություն իրականացնողի անունից կամ նրա կողմից:».

- ավելացնել հետեւյալ կետը.

«4. «կանոնագրքի հեղինակ» նշանակում է ցանկացած անձ, ներառյալ՝ առեւտրային գործունեություն իրականացնողը կամ առեւտրային գործունեություն իրականացնողների խումբը, որը պատասխանատու է վարքագծի կանոնագրքի կազմման եւ վերանայման եւ (կամ) այդ կանոնագրքի պահանջների կատարումն այն անձանց կողմից դիտանցելու համար, որոնք ստանձնել են դրանով սահմանված պարտավորությունները:»:

3. 3(ա) հոդվածը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«Հոդված 3 (ա)

1. Համեմատական գովազդը, այնքանով, որքանով այն վերաբերում է համեմատությանը, թույլատրվում է հետեւյալ պայմանները բավարարելու դեպքում.

ա) այն սույն հրահանգի 2(2), 3 եւ 7(1) հոդվածների կամ «Ներքին շուկայում սպառողների նկատմամբ տնտեսավարող սուբյեկտների անբարեխիղճ գործելակերպի մասին» Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 2005 թվականի մայիսի 11-ի 2005/29/ԵՀ հրահանգի 6-րդ եւ 7-րդ հոդվածների իմաստով մոլորեցնող չէ (*).

բ) այն համեմատում է միեւնույն կարիքները բավարարող կամ միեւնույն նպատակի համար նախատեսված ապրանքներ կամ ծառայություններ.

գ) այն օբյեկտիվորեն համեմատում է այնպիսի ապրանքների եւ ծառայությունների մեկ կամ մի քանի կարեւոր, էական, ստուգելի եւ ներկայացուցչական հատկանիշները, որոնք կարող են ներառել գինը.

դ) այն չի վարկաբեկում կամ որակազրկում մրցակցի առեւտրային նշանները, առեւտրային անվանումները, մյուս տարբերակիչ նշանները, ապրանքները, ծառայությունները, գործունեությունը կամ հանգամանքները.

ե) ծագման տեղանվամբ արտադրանքների համար այն յուրաքանչյուր դեպքում առնչվում է միեւնույն տեղանվամբ արտադրանքներին.

զ) այն անբարեխիղճ կերպով չի օգտվում մրցակցի առեւտրային նշանի, առեւտրային անվանման կամ մյուս տարբերակիչ նշանների կամ մրցակցող արտադրանքների ծագման տեղանվան համբավից.

է) այն չի ներկայացնում ապրանքները կամ ծառայությունները որպես պաշտպանված առեւտրային նշան կամ առեւտրային անվանում կրող ապրանքների կամ ծառայությունների նմանակումներ կամ կրկնօրինակումներ.

(*) ՊՏ L 149, 11.06.2005թ., էջ 22:

ը) այն շփոթություն չի առաջացնում առեւտրային գործունեություն իրականացնողների շրջանում, գովազդատուի եւ մրցակցի միջեւ կամ գովազդատուի եւ մրցակցի առեւտրային նշանների, առեւտրային անվանումների, մյուս տարբերակիչ նշանների, ապրանքների կամ ծառայությունների միջեւ:»:

4. 4(1) հոդվածը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«1. Անդամ պետություններն ապահովում են մոլորեցնող գովազդի դեմ պայքարելուն ուղղված համարժեք եւ արդյունավետ միջոցների առկայությունը՝ ապահովելու համեմատական գովազդին վերաբերող դրույթների հետ համապատասխանությունը՝ ելնելով առեւտրային գործունեություն իրականացնողների եւ մրցակիցների շահերից: Այդ միջոցները ներառում են իրավական դրույթներ, որոնց համաձայն՝ մոլորեցնող գովազդի դեմ պայքարելու կամ համեմատական գովազդը կարգավորելու հարցում ազգային իրավունքի համաձայն օրինական շահ ունեցող անձինք կամ կազմակերպությունները կարող են՝

ա) նախաձեռնել իրավական վարույթի հարուցումն այդպիսի գովազդի դեմ, կամ

բ) այդպիսի գովազդի առնչությամբ բողոք ներկայացնել վարչական մարմին, որն իրավասու է բողոքների մասով որոշումներ ընդունել կամ համապատասխան իրավական վարույթ հարուցել:

Յուրաքանչյուր անդամ պետություն ինքն է որոշում, թե նշված միջոցներից որը պետք է հասանելի լինի, եւ արդյոք պետք է թույլատրել, որ դատարանները կամ վարչական մարմինները բողոքները քննելու համար սահմանված այլ, այդ թվում՝ 5-րդ հոդվածում նշված միջոցներին նախապես դիմելու պահանջ ներկայացնեն:

Յուրաքանչյուր անդամ պետություն ինքն է որոշում՝

ա) արդյոք այդ իրավական միջոցները կարող են ուղղվել միեւնույն տնտեսական բնագավառի մի շարք առեւտրային գործունեություն իրականացնողների դեմ՝ առանձին-առանձին կամ համատեղ կերպով,

եւ

բ) արդյոք այդ իրավական միջոցները կարող են ուղղվել կանոնագրքի հեղինակի դեմ, եթե համապատասխան կանոնագիրքը նպաստում է իրավական պահանջների չկատարմանը:»:

5. 7(1) հոդվածը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«1. Սույն հրահանգը չի խոչընդոտում անդամ պետություններին պահպանել եւ ընդունել դրույթներ մոլորեցնող գովազդի առնչությամբ՝ առեւտրային գործունեություն իրականացնողների եւ մրցակիցների համար առավել ընդլայնված պաշտպանություն ապահովելու նպատակով:»:

Հոդված 15

97/7/ԵՀ եւ 2002/65/ԵՀ հրահանգներում կատարվող փոփոխությունները

1. 97/7/ԵՀ հրահանգի 9-րդ հոդվածը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«Հոդված 9.

Իներտ հաճախորդին պարտադրվող վաճառքը (Inertia selling)

Հաշվի առնելով «Ներքին շուկայում սպառողների նկատմամբ տնտեսավարող սուբյեկտների անբարեխիղճ առեւտրային գործելակերպի մասին» Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 2005 թվականի մայիսի 11-ի 2005/29/ԵՀ հրահանգով սահմանված՝ իներտ հաճախորդին պարտադրվող

վաճառքի գործելակերպի (inertia selling practices) արգելքը (*)՝ անդամ պետությունները ձեռնարկում են անհրաժեշտ միջոցներ՝ չպատվիրված ապրանքների դիմաց՝ համաձայնություն չհամարվող պատասխանի բացակայության դեպքերում փոխհատուցում տրամադրելու պարտավորությունից սպառողին ազատելու համար:

2. 2002/65/ԵՀ հրահանգի 9-րդ հոդվածը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«Հոդված 9.

Հաշվի առնելով «Ներքին շուկայում սպառողների նկատմամբ տնտեսավարող սուբյեկտների անբարեխիղճ առեւտրային գործելակերպի մասին» Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 2005 թվականի մայիսի 11-ի 2005/29/ԵՀ հրահանգով սահմանված՝ իներտ հաճախորդին պարտադրվող վաճառքի գործելակերպի արգելքը (*) եւ չսահմանափակելով հեռահար կնքված պայմանագրերի ժամկետները լռելյայն համաձայնությամբ երկարաձգելու մասին անդամ պետությունների օրենսդրության դրույթները, երբ այդ կանոններով թույլատրվում է պայմանագրերի ժամկետները լռելյայն համաձայնությամբ երկարաձգել, անդամ պետությունները ձեռնարկում են միջոցներ՝ չպատվիրված ապրանքների դիմաց՝ համաձայնություն չհամարվող պատասխանի բացակայության դեպքերում փոխհատուցում տրամադրելու պարտավորությունից սպառողին ազատելու համար:

(*) ՊՏ L 149, 16.06.2005թ., էջ 22:»:
(*) ՊՏ L 149, 11.06.2005թ., էջ 22:»:

Հոդված 16

98/27/ԵՀ հրահանգում եւ թիվ 2006/2004/ԵՀ կանոնակարգում կատարվող փոփոխությունները

1. 98/27/ԵՀ հրահանգի հավելվածի 1-ին կետը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

   «1. «Ներքին շուկայում սպառողների նկատմամբ տնտեսավարող սուբյեկտների անբարեխիղճ առեւտրային գործելակերպի մասին» Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 2005 թվականի մայիսի 11-ի 2005/29/ԵՀ հրահանգ (ՊՏ L 149, 11.06.2005թ., էջ 22):»:

2. «Սպառողների պաշտպանության մասին իրավական ակտերի կիրարկման համար պատասխանատու ազգային մարմինների միջեւ համագործակցության մասին» Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 2004 թվականի հոկտեմբերի 27-ի թիվ 2006/2004/ԵՀ կանոնակարգի (Սպառողների պաշտպանության հարցերով համագործակցության մասին կանոնակարգ) ([1]) հավելվածը լրացնել հետեւյալ կետով.

   «16. «Ներքին շուկայում սպառողների նկատմամբ տնտեսավարող սուբյեկտների անբարեխիղճ առեւտրային գործելակերպի մասին» Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 2005 թվականի մայիսի 11-ի 2005/29/ԵՀ հրահանգ (ՊՏ L 149, 11.06.2005թ., էջ 22):»:

[1] ՊՏ L 364, 09.12.2004թ., էջ 1:

Հոդված 17

Տեղեկությունների տրամադրումը

Անդամ պետությունները ձեռնարկում են անհրաժեշտ միջոցներ՝ տեղեկացնելու սպառողներին սույն հրահանգը փոխատեղող ազգային իրավունքի մասին, եւ հարկ եղած դեպքում խրախուսում առեւտրային գործունեություն իրականացնողներին եւ վարքագծի կանոնագրքերի հեղինակներին տեղեկացնել սպառողներին վարքագծի իրենց կանոնագրքերի մասին:

Հոդված 18

Վերանայումը

1. Մինչեւ 2011 թվականի հունիսի 12-ը Հանձնաժողովը Եվրոպական պառլամենտին եւ Խորհրդին է ներկայացնում համապարփակ զեկույց սույն հրահանգի, մասնավորապես՝ 3(9) եւ 4-րդ հոդվածների եւ Հավելված I-ի կիրառման մասին, սպառողների շահերի պաշտպանությանն առնչվող Համայնքի իրավունքի հետագա ներդաշնակեցման եւ պարզեցման շրջանակի մասին եւ, հաշվի առնելով 3(5) հոդվածը, ցանկացած միջոցի մասին, որոնք անհրաժեշտ է ձեռնարկել Համայնքի մակարդակով՝ ապահովելու սպառողների շահերի պաշտպանության համարժեք մակարդակների պահպանումը: Անհրաժեշտության դեպքում զեկույցին կից ներկայացվում է սույն հրահանգը կամ Համայնքի իրավունքի այլ համապատասխան մասեր վերանայելու առաջարկություն:

2. Եվրոպական պառլամենտը եւ Խորհուրդը պետք է Հանձնաժողովի կողմից 1-ին պարբերության համաձայն ցանկացած առաջարկություն ներկայացվելուց հետո երկու տարվա ընթացքում գործեն Պայմանագրի դրույթներին համապատասխան:

Հոդված 19

Փոխատեղումը

Անդամ պետություններն ընդունում եւ հրապարակում են սույն հրահանգի կատարման համար անհրաժեշտ օրենքները, կանոնակարգերը եւ վարչական ակտերը մինչեւ 2007 թվականի հունիսի 12-ը: Նրանք անմիջապես այդ մասին տեղեկացնում են Հանձնաժողովին, ինչպես նաեւ Հանձնաժողովին անհապաղ տեղեկացնում դրանց ցանկացած հետագա փոփոխության մասին:

Նրանք կիրառում են այդ միջոցները մինչեւ 2007 թվականի դեկտեմբերի 12-ը: Եթե անդամ պետություններն ընդունում են այդ միջոցները, ապա դրանք պետք է հղում պարունակեն սույն հրահանգին կամ ուղեկցվեն այդպիսի հղումով՝ դրանց պաշտոնական հրապարակման դեպքում: Անդամ պետությունները որոշում են, թե ինչպես պետք է կատարվի այդպիսի հղումը:

Հոդված 20

Ուժի մեջ մտնելը

Սույն հրահանգն ուժի մեջ է մտնում *Եվրոպական միության պաշտոնական տեղեկագրում* հրապարակվելու հաջորդ օրը:

Հոդված 21

Հասցեատերերը

Սույն հրահանգը հասցեագրված է անդամ պետություններին:

Կատարված է Ստրասբուրգում 2005 թվականի մայիսի 11-ին:

Եվրոպական պառլամենտի կողմից՝	*Խորհրդի կողմից՝*
Նախագահ	*Նախագահ*
Ջ.Փ. ԲՈՐՐԵԼ ՖՈՆՏԵԼՅԵՍ	Ն. ՇՄԻԴԹ

ՀԱՎԵԼՎԱԾ I

ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԳՈՐԾԵԼԱԿԵՐՊԵՐ, ՈՐՈՆՔ ԲՈԼՈՐ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐՈՒՄ ԴԻՏՎՈՒՄ ԵՆ ՈՐՊԵՍ ԱՆԲԱՐԵԽԻՂՃ

Մոլորեցնող առեւտրային գործելակերպեր են համարվում՝

1. վարքագծի կանոնագրքի ստորագրող կողմ լինելը պնդելն այն դեպքում, երբ առեւտրային գործունեություն իրականացնողը ստորագրող կողմ չի հանդիսանում:

2. Տրաստային նշան, որակի կամ համարժեք նշան ցուցադրելը՝ առանց անհրաժեշտ թույլտվություն ստանալու:

3. Պնդելը, որ վարքագծի կանոնագիրքը հաստատվել է պետական կամ մեկ այլ մարմնի կողմից, երբ իրականում այդպես չէ:

4. Պնդելը իբրեւ առեւտրային գործունեություն իրականացնողի գործունեությունը (ներառյալ՝ վերջինիս առեւտրային գործելակերպերը) կամ արտադրանքը հաստատվել, ընդունվել կամ թույլատրվել է պետական կամ մասնավոր մարմնի կողմից, երբ իրականում այդպես չէ, կամ այդպիսի հայտարարություն անելը՝ չհամապատասխանելով հաստատման, ընդունման կամ թույլտվության համար անհրաժեշտ պայմաններին:

5. Կոնկրետ գնով արտադրանքներ գնելու հրավիրելը՝ առանց բացահայտելու ցանկացած ողջամիտ հիմքի առկայություն, որն առեւտրային գործունեություն իրականացնողին թույլ կտա ենթադրել, որ նա չի կարողանա դրանք մատակարարման համար առաջարկել կամ գտնել մեկ այլ առեւտրային գործունեություն իրականացնողի, որպեսզի վերջինս մատակարարի այդ արտադրանքները կամ համարժեք արտադրանքներ այն գնով, այն ժամանակահատվածում եւ այն քանակությամբ, որոնք խելամիտ են՝ հաշվի առնելով արտադրանքը, արտադրանքը գովազդելու ծավալը եւ առաջարկվող գինը (գրավիչ գովազդ (bait advertising)):

6. Կոնկրետ գնով արտադրանքներ գնելու հրավիրելը եւ այնուհետեւ՝

ա) գովազդվող արտադրանքը սպառողներին ցույց տալուց հրաժարվելը, կամ

բ) դրա համար պատվերներ վերցնելուց կամ դա խելամիտ ժամկետում առաքելուց հրաժարվելը, կամ

գ) դրա՝ թերություններ ունեցող նմուշը ցույց տալը՝

մեկ այլ արտադրանք գովազդելու մտադրությամբ (գրավելը եւ այնուհետեւ փոխելը (bait and switch)):

7. Կեղծ ձեւով ներկայացնելը, որ արտադրանքը հասանելի է լինելու շատ սահմանափակ ժամանակահատվածով՝ կոնկրետ պայմաններով, անմիջապես որոշում կորզելու եւ սպառողներին հիմնավորված ընտրություն կատարելու բավարար հնարավորությունից կամ ժամանակից զրկելու նպատակով:

8. Պարտավորվելը հետվաճառքային ծառայություն տրամադրել այն սպառողներին, որոնց հետ առեւտրային գործունեություն իրականացնողը մինչեւ գործարքը հաղորդակցվել է այն անդամ պետության պաշտոնական լեզուն չհամարվող լեզվով, որտեղ առեւտրային գործունեություն իրականացնողը գտնվում է, եւ այնուհետեւ այդ ծառայությունը տրամադրել բացառապես մեկ այլ լեզվով՝ առանց սպառողի համար դա հստակ բացահայտելու՝ մինչեւ սպառողի կողմից գործարքն իրականացնելը:

9. Պնդելը կամ այլ կերպ այնպիսի տպավորություն ստեղծելը, որ արտադրանքը կարող է օրինական ճանապարհով վաճառվել, երբ իրականում այդպես չէ:

10. Օրենքով սպառողներին տրված իրավունքները ներկայացնելը որպես առեւտրային գործունեություն իրականացնողի առաջարկի որոշիչ հատկանիշ:

11. Լրատվամիջոցներում արտադրանքը գովազդելու համար խմբագրական բովանդակություն կիրառելը, երբ առեւտրային գործունեություն իրականացնողը վճարել է գովազդի համար, սակայն այդ փաստը սպառողի

համար հստակ նույնականացվող եղանակով չի հստակեցրել բովանդակության մեջ կա՛մ պատկերներով, կա՛մ ձայնային միջոցներով (պատվիրված խմբագրական բովանդակությամբ քողարկված գովազդ): Այն չի հակասում Խորհրդի 89/552/ԵՏՀ հրահանգին ([1]):

12. Սպառողի կամ իր ընտանիքի անհատական անվտանգությանը սպառնացող ռիսկի բնույթի եւ չափի վերաբերյալ էականորեն ոչ ճշգրիտ հայտարարություն անելը՝ սպառողի կողմից ապրանքը չգնելու դեպքում:

13. Կոնկրետ արտադրողի կողմից արտադրված արտադրանքի նման արտադրանքը գովազդելը՝ միտումնավոր կերպով սպառողին մոլորեցնելու եւ հավատացնելու համար, որ արտադրանքն արտադրված է միեւնույն արտադրողի կողմից, երբ իրականում դա այդպես չէ:

14. Բրգաձեւ գովազդման համակարգի սխեմա ստեղծելը, իրագործելը կամ գովազդելը, որի դեպքում սպառողն ուշադրություն է դարձնում փոխհատուցում ստանալու հնարավորությանը, որը ձեւավորվում է հիմնականում այլ սպառողների սխեմայում ներգրավելու միջոցով, այլ ոչ թե արտադրանքների վաճառքից կամ սպառումից:

15. Պնդելը, որ առեւտրային գործունեություն իրականացնողը պատրաստվում է դադարեցնել իր առեւտրային գործունեությունը, կամ տեղափոխվել այլ տարածք, երբ իրականում այդպես չէ:

16. Պնդելը, որ արտադրանքները կարող են նպաստել շահումով խաղերում հաղթելուն:

17. Կեղծ ձեւով պնդելը, որ արտադրանքը կարող է օգնել հիվանդություններ, ֆունկցիոնալ խանգարումներ կամ զարգացման արատներ բուժելուն:

---

[1] «Հեռուստահեռարձակման գործունեության իրականացման վերաբերյալ անդամ պետությունների իրավունքով, կանոնակարգերով կամ վարչարարությամբ սահմանված որոշակի դրույթների համակարգման մասին» Խորհրդի 1989 թվականի հոկտեմբերի 3-ի 89/552/ԵՏՀ հրահանգ (ՊՏ L 298, 17.10.1989թ., էջ 23): Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 97/36/ԵՀ հրահանգով փոփոխված հրահանգ (ՊՏ L 202, 30.07.1997թ., էջ 60):

18. Շուկայի պայմանների կամ արտադրանքը գտնելու հնարավորության մասին էական ոչ ճշգրիտ տեղեկություններ փոխանցելը՝ սպառողներին նորմալ շուկայական պայմաններից պակաս բարենպաստ պայմաններով արտադրանքը ձեռք բերելուն դրդելու նպատակով:

19. Պնդելը, որ առեւտրային գործելակերպով առաջարկվում է մրցութային կամ մրցանակային խրախուսում՝ չշնորհելով նկարագրված մրցանակները կամ դրանց ընդունելի համարժեքը:

20. Արտադրանքը որպես «անհատույց», «անվճար», «առանց գումարի» կամ համանման ձեւով նկարագրելը, եթե սպառողը պետք է վճարի առեւտրային գործելակերպին արձագանքելու եւ արտադրանքն ստանալու կամ դրա առաքման համար վճարելու հետ կապված անխուսափելի արժեքից բացի այլ բան:

21. Շուկայահանման նյութում հաշիվ-ապրանքագիր կամ վճարում նախատեսող համանման փաստաթուղթ ներառելը, ինչը սպառողի մոտ տպավորություն է ստեղծում, որ նա արդեն պատվիրել է շուկայահանված արտադրանքը, երբ իրականում այդպես չէ:

22. Կեղծ ձեւով պնդելը կամ տպավորություն ստեղծելը, որ առեւտրային գործունեություն իրականացնողը չի իրականացնում իր առեւտրային, ձեռնարկատիրական գործունեությամբ, արհեստով կամ մասնագիտությամբ հետապնդվող նպատակներ կամ կեղծ ձեւով ինքն իրեն որպես սպառող ներկայացնելը:

23. Կեղծ տպավորություն ստեղծելը, որ արտադրանքի հետ կապված հետվաճառքային ծառայությունը հասանելի է ոչ այն անդամ պետությունում, որտեղ արտադրանքը վաճառվել է:

Ագրեսիվ առեւտրային գործելակերպեր են համարվում՝

24. այնպիսի տպավորություն ստեղծելը, որ սպառողը չի կարող լքել շինությունը մինչեւ պայմանագիրը կազմվելը:

25. Սպառողների տուն անհատական այցելություններ կատարելը՝ անտեսելով սպառողի՝ հեռանալու կամ այլեւս չվերադառնալու խնդրանքը, բացառությամբ այն հանգամանքների եւ այնքանով, որքանով դա, ազգային իրավունքի համաձայն, հիմնավորված է՝ պայմանագրով սահմանված պարտավորությունը կատարելու համար:

26. Հեռախոսով, ֆաքսով, էլեկտրոնային փոստով կամ հեռակա այլ միջոցներով համառ եւ անցանկալի առաջարկներ կատարելը՝ բացառությամբ այն հանգամանքների եւ այնքանով, որքանով դա, ազգային իրավունքի համաձայն, հիմնավորված է՝ պայմանագրով սահմանված պարտավորությունը կատարելու համար: Այն չի հակասում 97/7/ԵՀ հրահանգի 10-րդ հոդվածին եւ 95/46/ԵՀ ([1]) եւ 2002/58/ԵՀ հրահանգներին:

27. Պահանջելը, որ սպառողը, որը ցանկանում է բողոք ներկայացնել ապահովագրական քաղաքականության մասով, տրամադրի փաստաթղթեր, որոնք չեն կարող ողջամիտ կերպով էական համարվել բողոքի հիմնավորված լինելու առումով, կամ գործին վերաբերող նամակագրությանը պարբերաբար չարձագանքելը՝ տարհամոզելու համար սպառողին օգտվել պայմանագրով նախատեսված իր իրավունքներից:

28. Գովազդում երեխաներին ուղղված ուղղակի կոչեր ներառելը՝ գնելու գովազդվող արտադրանքները կամ համոզելու իրենց ծնողներին կամ այլ մեծահասակների՝ գնելու գովազդվող արտադրանքներն իրենց համար: Սույն դրույթը չի հակասում «Հեռուստատեսային հեռարձակման մասին» 89/552/ԵՏՀ հրահանգի 16-րդ հոդվածին:

29. Առեւտրային գործունեություն իրականացնողի կողմից մատակարարված, սակայն սպառողի կողմից չպահանջված արտադրանքների դիմաց անմիջապես կամ հետաձգված վճարում կամ դրանց վերադարձ կամ

[1] «Անձնական տվյալների մշակման մասով անհատների պաշտպանության եւ այդ տվյալների ազատ տեղաշարժի մասին» Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 1995 թվականի հոկտեմբերի 24-ի 95/46/ԵՀ հրահանգ (ՊՏ L 281, 23.11.1995թ., էջ 31): Թիվ 1882/2003/ԵՀ կանոնակարգով փոփոխված հրահանգ (ՊՏ L 284, 31.10.2003թ., էջ 1):

պահպանում պահանջելը, բացառությամբ այն դեպքերի, երբ արտադրանքը 97/7/ԵՀ հրահանգի 7(3) հոդվածի («Ներտ հաճախորդին պարտադրվող վաճառքը») համաձայն մատակարարվող արտադրանքը փոխարինող արտադրանքն է:

30. Սպառողին հստակ կերպով տեղեկացնելը, որ եթե վերջինս չգնի արտադրանքը կամ չօգտվի ծառայությունից, առեւտրային գործունեություն իրականացնողի աշխատանքը կամ կենսագործունեությունը կվտանգվի:

31. Այնպիսի կեղծ տպավորություն ստեղծելը, որ սպառողն արդեն շահել է, շահելու է կամ կոնկրետ գործողություն կատարելով շահելու է մրցանակ կամ ստանալու է այլ համարժեք օգուտ, երբ իրականում՝

- առկա չէ մրցանակ կամ այլ համարժեք օգուտ,

  կամ

- մրցանակ կամ այլ համարժեք օգուտ պահանջելու մասով գործողություն իրականացնելը հանգեցնում է նրան, որ սպառողը վճարում է գումար կամ կրում է ծախսեր:

ՀԱՎԵԼՎԱԾ II

ԳՈՎԴԱԶԴԻ ԵՎ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԿԱՆՈՆՆԵՐ ՍԱՀՄԱՆՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ

97/7/ԵՀ հրահանգի 4-րդ եւ 5-րդ հոդվածները

«Փաթեթով առաջարկվող ճանապարհորդության, փաթեթով տրամադրվող արձակուրդների եւ փաթեթով էքսկուրսիաների մասին» Խորհրդի 1990 թվականի հունիսի 13-ի 90/314/ԵՏՀ հրահանգի 3-րդ հոդված ([1])

«Անշարժ գույքի տարաժամկետ (ժամկետային հաջորդականությամբ) օգտագործման իրավունքի (timeshare) ձեռքբերման պայմանագրերի որոշակի ասպեկտների հետ կապված գնորդների պաշտպանության մասին» Եվրոպական պառլամենտի եւ խորհրդի 1994 թվականի հոկտեմբերի 26-ի 94/47/ԵՀ հրահանգի 3(3) հոդված ([2])

«Սպառողներին առաջարկվող արտադրանքների գնանշման մասով սպառողների շահերի պաշտպանության մասին» Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 1998 թվականի փետրվարի 16-ի 98/6/ԵՀ հրահանգի 3(4) հոդված ([3])

«Մարդու օգտագործման համար նախատեսված դեղագործական արտադրանքի վերաբերյալ Համայնքի կանոնների մասին» Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 2001 թվականի նոյեմբերի 6-ի 2001/83/ԵՀ հրահանգի 86-րդ հոդվածից մինչեւ 100-րդ հոդվածներ ([4])

«Ներքին շուկայում տեղեկատվական հասարակությանը բնորոշ ծառայությունների, մասնավորապես՝ էլեկտրոնային առեւտրի որոշ իրավական հայեցակետերի մասին» Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 2000 թվականի

---

[1] ՊՏ L 158, 23.06.1990թ., էջ 59:
[2] ՊՏ L 280, 29.10.1994թ., էջ 83:
[3] ՊՏ L 80, 18.03.1998թ., էջ 27:
[4] ՊՏ L 311, 28.11.2001թ., էջ 67: 2004/27/ԵՀ հրահանգով վերջին անգամ փոփոխված հրահանգ (ՊՏ L 136, 30.04.2004թ., էջ 34):

հունիսի 8-ի 2000/31/ԵՀ հրահանգի (Էլեկտրոնային առեւտրի մասին հրահանգ) 5-րդ եւ 6-րդ հոդվածներ ([1])

«Սպառողական վարկի մասին անդամ պետությունների օրենքների, կանոնակարգերի եւ վարչական ակտերի մոտարկման նպատակով Խորհրդի 87/102/ԵՏՀ հրահանգը փոփոխելու մասին» Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 1998 թվականի փետրվարի 16-ի 98/7/ԵՀ հրահանգի 1(դ) հոդված ([2])

2002/65/ԵՀ հրահանգի 3-րդ եւ 4-րդ հոդվածները

«Ղեկավարող ընկերությունների եւ պարզեցված ազդագրերի կարգավորման նպատակով փոխանցելի արժեթղթերով կոլեկտիվ ներդրումային ընկերություններին (ՓԱԿՆԸ) առնչվող օրենքների, կանոնակարգերի եւ վարչական դրույթների համակարգման մասին» Խորհրդի 85/611/ԵՏՀ հրահանգը փոփոխող Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 2002 թվականի հունվարի 21-ի 2001/107/ԵՀ հրահանգի 1(9) հոդված ([3])

«Ապահովագրական միջնորդության մասին» Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 2002 թվականի դեկտեմբերի 9-ի 2002/92/ԵՀ հրահանգի 12-րդ եւ 13-րդ հոդվածներ ([4])

«Կյանքի ապահովագրության մասին» Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 2002 թվականի նոյեմբերի 5-ի 2002/83/ԵՀ հրահանգի 36-րդ հոդված ([5])

«Ֆինանսական գործիքների շուկաների մասին» Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 2004 թվականի ապրիլի 21-ի 2004/39/ԵՀ հրահանգի 19-րդ հոդված ([6])

«Կյանքի ապահովագրությունից բացի ուղղակի ապահովագրությանը վերաբերող օրենքների, կանոնակարգերի եւ վարչական ակտերի համակարգման մասին»

---

[1] ՊՏ L 178, 17.07.2000թ., էջ 1:
[2] ՊՏ L 101, 01.04.1998թ., էջ 17:
[3] ՊՏ L 41, 13.02.2002թ., էջ 20:
[4] ՊՏ L 9, 15.01.2003թ., էջ 3:
[5] ՊՏ L 345, 19.12.2002թ., էջ 1: Խորհրդի 2004/66/ԵՀ հրահանգով փոփոխված հրահանգ (ՊՏ L 168, 01.05.2004թ., էջ 35):
[6] ՊՏ L 145, 30.04.2004թ., էջ 1:

Խորհրդի 1992 թվականի հունիսի 18-ի 92/49/ԵՏՀ հրահանգի 31-րդ եւ 43-րդ հոդվածներ ([1]) (ոչ կյանքի ապահովագրության մասին երրորդ հրահանգ)

«Արժեթղթերի բաց վաճառքի կամ դրանց առուվաճառքի իրականացման դեպքում հրապարակվող ազդագրի մասին» Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 2003 թվականի նոյեմբերի 4-ի 2003/71/ԵՀ հրահանգի 5-րդ, 7-րդ եւ 8-րդ հոդվածներ ([2])

---

[1] ՊՏ L 228, 11.08.1992թ., էջ 1: Եվրոպական պառլամենտի եւ խորհրդի 2002/87/ԵՀ հրահանգով վերջին անգամ փոփոխված հրահանգ (ՊՏ L 35, 11.02.2003., էջ 1):
[2] ՊՏ L 345, 31.12.1991թ., էջ 64: